ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/54

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.05.2018թ. թիվ 03/26-3/8531-18 գրությամբ Ա/Ձ Նաիրի Թորոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1567 գրության հիման վրա, 12.05.2018թ. թիվ 03/26-3/8531-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Նաիրի Թորոսյանին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Նաիրի Թորոսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ա/Ձ Նաիրի Թորոսյանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ներկերի և լուծիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Նաիրի Թորոսյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2018թ. ժամը 10:00 տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 20.04.2018թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել Ա/Ձ Նաիրի Թորոսյանը, 3-րդ չափաբաժնում առաջին տեղ զբաղեցնող ճանաչվել է «Վարբադ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2018թ. ժամը 11:00 տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ա/Ձ Նաիրի Թորոսյանի և «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացվել են, սակայն դրանցում առկա են անհամապատաս-

խանություններ, մասնավորապես Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, բացի այդ, ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ 1-ին չափաբաժնի (ներկ պաշտպանական, ԽՎ-518 Ներկ պաշտպանական ԽՎ-518) մասով նշված ՏՈՒ գոյություն չունի: «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները առկա են, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը բացակայում են:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները՝ 02.05.2018թ. գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել շտկել անհամապատասխանությունները:

04.05.2018թ. գնահատող հանձնաժողովը շարունակել է մասնակիցների որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստը: «Վարբադ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից պահանջվող շտկումները չեն ներկայացվել: Հաշվի առնելով այդ հանգամանքը, գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Մասնակցի հայտը:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանի հայտը մերժելու արդյունքում ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Վարբադ» ՍՊԸ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 02.05.2018թ. Ա/Ձ Նաիրի Թորոսյանի էլեկտրոնային փոստի հասցեին ծանուցում է ուղարկվել՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Այսպես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2018թ. ժամը 11:00 տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ա/Ձ Նաիրի Թորոսյանը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացրել է, սակայն դրանցում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայում էին «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, բացի այդ, ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ 1-ին չափաբաժնի (ներկ պաշտպանական, ԽՎ-518, Ներկ պաշտպանական ԽՎ-518) մասով նշված ՏՈՒ գոյություն չունի:

Համաձայն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության, շտկումը պետք է իրականացվեր մեկ աշխատանքային օրվա ընթացքում (02.05.2018թ.), սակայն այդ օրերին ինչպես

Երևանում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության այլ մարզերում տիրում էր ֆորս-մաժորային իրավիճակ և անհնար էր հասնել աշխատանքի վայր և աշխատել աշխատանքային բնականոն հունով:

Այդ իսկ պատճառով՝ Մասնակիցը 02.05.2018թ. չի կարողացել իրականացնել համապատասխան շտկումը, և միայն 05.05.2018թ. է հնարավորություն ունեցել ներկայացնել այդ շտկումը:

Ուշացումով իրականացված այդ շտկմամբ Ա/Ձ Նաիրի Թորոսյանը, մասնավորապես, հայտնել է հետևյալը. «Ինչ վերաբերում է իմ կողմից ուղարկված թիվ 1 չափաբաժնին (ներկ պաշտպանական ԽՎ-518-ի ՏՈՒ-ին), որ այն գոյություն չունի, հավաստիացնում եմ, որ այն գոյություն ունի ՏՈՒ2310-002-81928782-2011, արտադրող ООО «Спец Эмаль» город Ярославль, ул. Полушкина роща, дом 16 РФ: Ելնելով վերոգրյալից հայցում եմ Ձեր ներողամտությունը և խնդրում եմ գնահատել հանձնաժողովին թույլատրելու ներկայացնել շտկված անհամապատասխանությունները: Կից ներկայացվում է Ներկ ԽՎ-518 պաշտպանիչ ՏՈՒ2310-002-81928782-2011-ի որակի անձնագիրը և տվյալ ներկի տարայի նկարը»:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանը հայտնել է, որ այդ օրերին ծավալված համատարած գործադուլների և ճանապարհների փակ լինելու հետևանքով (ամենաթեժ օրը՝ 2018թ. մայիսի 2-ին) բազմաթիվ ընկերություններ, այդ թվում նաև Ա/Ձ Նաիրի Թորոսյանը, գնման մրցույթների ընթացքում համապատասխան պարտականությունները (օրինակ, փաստաթղթեր կազմելու և ներկայացնելու պարտականություն) նշված օբյեկտիվ պատճառներով հնարավորություն չունենալով իրականացնելու՝ փաստացի կանգնել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Մասնակիցը գտնում է, որ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից չի կատարվել օբյեկտիվ պատճառներով՝ երկրում ստեղծված իրավիճակի հետևանքով՝ Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից 18.05.2018թ. և 21.05.2018թ. դիմումներ են ներկայացվել, համապատասխանաբար՝ ՀՀ վարչապետին, ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալին և ՀՀ արդարադատության նախարարին, որով խնդրել է՝ նկատի ունենալով, որ ս.թ. ապրիլի

20-ից մինչև գրեթե մայիսի 8-ը ընկած հատվածում Երևան քաղաքում տիրում էր ֆորս-մաժորային իրավիճակ, համաներում շնորհել այն գնումների մասնակիցներին, որոնք այդ օրերին չեն կարողացել գնալ աշխատանքի վայր և աշխատել բնականոն հունով և կատարել համապատասխան պարտականությունները, որի արդյունքում այժմ հայտնվել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և Ա/Ձ Նաիրի Թորոսյանին չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված խախտումը և որպես հետևանք, Մասնակցին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/54 ընթացակարգի շրջանակներում 16.05.2018թ. ժամը 11:05-ին և 22.05.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1567 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները՝ համակարգի միջոցով (armeps.am) ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել են երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման փուլում, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից ներկայացված

փաստաթղթերում արձանագրվել էին անհամապատասխանություններ: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից առաջարկվել էր ներկայացնել համապատասխան շտկումներ: Սակայն Մասնակցի կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել (ընդհանրապես շտկում չի ներկայացվել):

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/54 ընթացակարգի շրջանակներում 16.05.2018թ. ժամը 11:05-ին և 22.05.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/54 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/54 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ներկերի և լուծիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել Ա/Ձ Նաիրի Թորոսյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ա/Ձ Նաիրի Թորոսյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 02.05.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է Ա/Ձ Նաիրի

Թորոսյանին՝ հայտնելով, որ վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

1. «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը Մասնակցի կողմից չեն ներկայացվել.
2. Ուսումնասիրելով Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարզ է դարձել, որ առաջին չափաբաժնի (ներկ՝ պաշտպանական, ԽՎ-518) մասով նշված ՏՈՒ գոյություն չունի: Անհրաժեշտ է ներկայացնել ՏՈՒ:

Վերոհիշյալ ծանուցմամբ Ընկերությանը առաջարկվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.05.2018թ. կայացրած որոշմամբ Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից ներկայացված հայտը մերժել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից համապատասխան շտկումները չեն ներկայացվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.05.2018թ. թիվ 03/26-3/8531-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1567 գրությունը և կից փաստաթղթերը, Ա/Ձ Նաիրի Թորոսյանի գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի

«զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ներկերի և լուծիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել Ա/Ձ Նաիրի Թորոսյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ա/Ձ Նաիրի Թորոսյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով

նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, բացի այդ ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ առաջին չափաբաժնի (ներկ՝ պաշտպանական, ԽՎ-518) մասով նշված ՏՈՒ գոյություն չունի: Անհրաժեշտ է ներկայացնել ՏՈՒ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 02.05.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է Ա/Ձ Նաիրի Թորոսյանին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2018թ. կայացրած որոշմամբ Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից ներկայացված հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից համապատասխան շտկումները չեն ներկայացվել:

ՍՑ-ԱՄ-2018/54 ընթացակարգի քննության շրջանակներում Ա/Ձ Նաիրի Թորոսյանը հայտնել է, որ 02.05.2018թ. չի կարողացել իրականացնել համապատասխան շտկումը և միայն 05.05.2018թ. է հնարավորություն ունեցել ներկայացնել այդ շտկումները:

Մասնակիցը 05.05.2018թ. համապատասխան գրություն է ուղարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հայտնելով, որ 02.05.2018թ. ծանուցման մասին տեղեկացել է միայն 05.05.2018թ. ուղարկված՝ Մասնակցի հայտ մերժելու մասին ծանուցումից: Դրա հետ մեկտեղ Մասնակիցը ներկայացրել է նաև համապատասխան շտկված փաստաթղթերը:

Մասնակիցը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել է, որ նշված օրերին ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում տիրող իրավիճակով պայմանավորված, ճանապարհների անանցանելիության պայմաններում հնարավորություն չի ունեցել հասնել աշխատանքի վայր և սահմանված ժամկետում ուղարկել պահանջվող շտկումները: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում իր պարտականության չկատարումը պայմանավորված է եղել օբյեկտիվ պատճառներով և Մասնակիցը որևէ մտադրություն չի ունեցել խուսափել պարտավորությունների կատարումից:

Ուսումնասիրելով Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից ներկայացված դիրքորոշումը և Ընթացակարգի շրջանակներում դրսևորած վարքագիծը, ինչպես նաև հաշվի առնելով քննարկվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավիճակը, գտնում եմ, որ Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը չկատարելը պայմանավորված է եղել Մասնակցի կամքից անկախ օբյեկտիվ պատճառներով, քանի որ նշված ժամանակահատվածում խաղաղ անհնազանդությունների շրջանակներում արգելափակված են եղել մի շարք ճանապարհներ և արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար մեկ աշխատանքային օր նախատեսված լինելու պայմաններում, Մասնակիցը զրկված է եղել իր պարտավորությունը կատարելու հնարավորությունից:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ա/Ձ Նաիրի Թորոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.05.2018թ. թիվ 03/26-3/8531-18 գրությամբ Ա/Ձ Նաիրի Թորոսյանին (ՀՎՀՀ՝ 35015341) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**